

ՎԱՂՈՆ ՄԻՄՅԱԼՆՑ ՎԵՐՔԵՐ ԵՆՔ ԼԻՁԵԼՈՒ

Դեռևս բրեժնևյան երանելի տասնամյակներում մոսկովյան քաղքենին՝ մեր պատմական ճակատագրին անգետ և անգիտացող, մեր նացիոնալիզմը տեսնում էր մեր միատարրության մեջ, և մոսկովյան բյուրոկրատը այդ միատարրությունը քայքայելու քաղաքականության անհաջող փորձ էր անում: 88-ի դեպքերի ժամանակ այստեղ էլ մեզ սպառնացին այսպես՝ մի պարծեցեք ձեր միատարրությամբ. մենք կարող ենք և կատելծենք այլ ժողովուրդներ ձեր իսկ մասից և արյունից: Իշխողները լավ գիտեն, թե միական բանակները դժվարությունների ճնշման տակ ինչպես են քայքայվում, որ քայքայիչ ցեցը բոլոր և բոլոր բանակների մեջ կա: Մենք հիմա պետք է հաղթահարենք մեր կուսակցական, անձնական և դասային էգոիզմը, կարողանանք վեր լինել ինքներս մեզանից, այլապես հողմերին կտանք մեր ժողովրդի հենց այսօրը, որ կոչվում է հայոց պետականություն:

Ե՛վ իրեն՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ու ամենաուղղափառ ՀՀՇ-ականների, և՛ Դաշնակցության, և՛ մյուս ընդդիմադիր ուժերի ու նրանց մեջ հատկապես այնպիսիների, որոնք իրենց համար գործ են դարձրել ընդդիմությունը՝ հանուն ընդդիմության, բոլոր-բոլորիս մեջ ես տեսնում եմ այն կարողությունը, որ ի գորու կլինենք հանդուրժել միմյանց՝ այսօր կուրծքներս ճնշող ճիչը գերմարդկային ջանքով վաղվան պահել, հասկանալ, որ շատ ու շատ դեպքերում միջոցը մենք լցնում ենք ո՛չ մեր խոսքով, հրապարակը զբաղեցնում ենք ո՛չ մեր խաղերով, որ մենք խաղալիք ենք այլ, ոչ բարեկամ ուժերի ձեռքին: Խորհրդարանային բեմի և միտինգային հրապարակի յուրաքանչյուր հերոս պարտավոր է հասկանալ, որ մեկ անգամ հերոսանալուց հետո նա այլևս հիվանդ մարդ է, որ նա փառքի աղի ջուր է խմել, որ նա պարտավոր է լռել ամիսներով, մաքրվել, փառքի աղմուկը թոթափել ականջներից, ծով բազմությունների հիացմունքը սրբել իր աչքերից և վերադառնալ իր սթափ վիճակին՝ վերագտնել իր իրական կարողությունների չափը, այլապես իր կործանումը կործանումն է նաև ամբողջ բազմությունների:

Ավերված երկրի, ազգային մեծ աղետի՝ տեղահանված ժողովրդի, փախստական ժողովրդի պատկերի առջև մենք պարտավոր ենք նույն ճիչը ճչալ, մի դեմքի, մի խոսքի գալ: Պարտավոր ենք միմյանց արատների և թերացումների առջև գոնե մի քանի ամսով կույր և խուլ լինել...

Կաթոլիկ ու լուսավորչական, դաշնակ ու ռամկավար, հայախոս ու թրքախոս, բուրժուա և չքավոր մեծ զարհուրանքի մեջ,

մեծ գաղթի ճանապարհներին միասին էինք, միմյանց վերքեր էինք լիզում: Ի՞նչ է, բուժեցինք, կազդուրեցինք, որպեսզի նորից միմյանց կոկո՞րդ կրծենք, թվացյալ փառքի ու հացի փա՞յ խլենք միմյանցից, ինքներս մեր ամբողջությունը և այդպիսով կայանալիք հայրենիքի զորությո՞ւնը ծվատենք, մերպեսներին պատմությունը չի՞ կոչի հիմարներ:

Այս նեղությունից, միևնույն է, դուրս ենք պրծնելու: Միայն ազգովի:

Բախտը մեզ ձեռնոց է նետել, և փոխանակ տղամարդու պես բարձրացնենք ձեռնոցը՝ երես ենք դարձրել և զբաղված ենք բուրրովին այլ բաներով: Թող մեր այսօրվա վարքը այնպես լինի, որ վաղը օդը հստակված և հայոց մեր երկինքը բաց լինի, կարողանանք միմյանց աչքերի շիտակ նայել:

Չտրոհենք անտրոհելին. և՛ այսօր, և՛ վաղը մենք միմյանց ենք պատկանում: